

ԲԱՅԵՆԻՆ


ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 ռ.
Վեցամս 25 "

ԱՐՏԱՍԱՀՄՆ
Տարեկ. 13 ֆր
Վեցամս. 7 "

Ամերիկա
2 ՏՊ. 30 սենթ
ԿԱՆԻՍԻԿ

Թիւր 1 Ղրշ. ողջ



ՀԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Կրտ. Թիւնք ետ
չեն տրուիր:

Ծանուցումներ
մասնաւոր պայ
մաններով:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

Է. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄ. 5 ՀԻՆԳՇԱՔԹԻ 1903

ԹԻԻ 280

Աղեքսանդրիայի դուրս գնաւորող մեր
բաժանորդներուն.

Թէպէտեւ Աղեքսանդրիոյ մեր Պատ. բաժա-
նորդները իրենց պարտքը կատարած են վճարե-
լով բաժնեգիրները, մինչև ցարգ. քաղաքէն դուրս
գտնուող, մասնաւորապէս Փահիրէի մեր Պատ.
բաժանորդները չեն բարեհաճած վճարել իրենց
բաժնեգիրն. ինչո՞ւ արդեօք այս տարբերութիւ-
նը ընդ մէջ Աղեքսանդրիացիներու և Փահիրէ-
ցիներու. ի՞նչ պատճառ կրնան գտնել այս յա-
պաղումին, քանի որ մեր թերթը վեց ամիսէ ի
վեր կանոնաւորապէս կը հրատարակուի և կը շըր-
կուի օրը օրին մեր բաժանորդներուն. Հետեա-
բար կը խնդրենք որ ալ ևս առանց յապաղելու
հասցունեն մեզ իրենց բաժնեգիրները:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԵՂԾԻՔԸ

Ձեմ գիտեր աւելի անիմաստ և ծիծաղելի
բան մը քան մարդու մը ըսելը ուրիշ մարդու
մը համար, «գէշ մարդ է». Պատահած է ինչ շատ
անգամ լսել Ա.ին բերնէն Բ.ին գէշութիւնը և
Բ.ին բերնէն Ա.ին գէշութիւնը. Ուրիշին գէշու-
թեան վրայ ճառողը կը մոռնայ թէ ինքը երկ-
նային վկայական մը չունի ձեռքը:

Կերեւի թէ մարդիկ հսկամէտ են գէշ կոչե-
լու զանոնք որոնք չարութեան մէջ քիչ մը կը

գերազանցեն զիրենք. օրինակի համար սուտ խօ-
սող կամ խարդախ մարդ մը ինքզինքը արդար
կը գանձ գողի մը քով. հանրատունները կեան-
քը մաշեցնող մը ինքզինքը աւելի բարոյականի
տէր կը կարծէ անպակ կին մը առնողին քով.
Իր կենը ծեծողը ինքզինքը աւելի արժանի ամու-
սին կը նկատէ իր կենը ձգողին քով, և այլն:

Մարդ իրաւունք չունի ուրիշը դատել իր
գործքերուն նայելով. Պէտք է գիտնալ որ ամէն
չարագործ կամաւ չարագործ եղած չէ, և ամէն
բարեգործ կամաւ բարեգործ եղած չէ. Մարդս
կը գործէ շատ անգամ ոչ թէ ինչ որ կ'ուզէ՝ այլ
ինչ որ հարկադրեալ է զործելու: Արդար չէ դա-
տել մէկը առանց ըլլալու անոր վիճակակից ու
բաղդակից. Սիրուած կնոջ մը համար դիւրին է
մեղադրանք գտնել չտիրուած ու լքուած կնոջ մը
արարքին մէջ. Կուշտ մարդու մը համար՝ դիւ-
րին է հաւատարմութեան մէջ թերի գտնել ա-
նօթին. Ամուսնացեալի մը համար՝ դիւրին է
քննադատել պարկեշտութիւնը ամուսրին. Յաջու-
ղածի մը համար աւելի հեշտ է իր խոստումը յար-
գելը քան ձախողուածի մը համար: Յաջմար ա-
մուսին մը գտնողին համար աւելի հեշտ է հա-
մերաշի կենակցիլը քան անյարմար ամուսին մը
ունեցողին համար:

Կեղծարուութիւն է դատել ուրիշը առանց
ունենալու անոր գոնարութիւնները. Ի հարկէ
մարդասպանը կախաղան ելլելու նպատակաւ չըս-
պաննուիր, ոչ ալ զոյր բանտերթալու նպատա-

կաւ կը գողնայ, ոչ ալ խանութպանը իր յաճախորդներէն զրկուելու նպատակաւ կը խաբէ զանոնք: Ամէն ոք իր անձին բարւոյն համար կաշխատի և ոչ ոք իր անձին չարիք կը վաժարի: Միայն թէ խաբաքանչիւր ոք կը գործէ ըստ իր գիտութեան և հասկացողութեան: Եթէ մարդ մը գէշ ճամբայ կ'ընտրէ յաջողելու համար, պատասխանատուն իրմէ աւելի զինք արտագրող ընկերութիւնն ու միջավայրն է:

Մարդ մը յանցաւոր չէ որովհետեւ սխալ ճամբայ մտած է: Նիւթական աշխարհին մէջ չենք դատապարտեր զայն, ինչո՞ւ կը դատապարտենք ուրեմն բարոյական աշխարհին մէջ սխալ ճամբէ գացող մը: Չարագործին համար պէտք եղածը բանտին խաւարը չէ՝ այլ կը թուութեան լոյսն է: Լուսաւորութեան կը կարօտի իր միտքը՝ հասկընալու համար իւր ճշմարիտ օգուտն ու շահը:

Չարութիւն չկայ, տգիտութիւն կայ: Բուն չարագործը կեղծաւորն է:

Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԱՉԴԱՅԻՅԵ

Պուլկարիայէ առնուած մեծնաւոր նամակներէ գոհութեամբ կը տեղեկանանք թէ, հայաշատ քաղաքներու մէջ ազգայնոց կողմէ հանգանակութիւններ ըլլալով կը յանձնուին Մակեդոնիայէ ի Պուլկարիա ապաստանող տարաբաղդ և թշուառ Պուլկար գաղթականաց նպաստամատոյց յանձնաժողովին:

Պուլկարահայք այս բանը ընելով, 1896ին Պուլկարիա ապաստանող հայ գաղթականաց նրկատմամբ Պուլկարներուն ցոյց տուած մարդասիրութիւնը կը փոխանակեն Ապրիլին:

— Սաքսոնիոյ թագաւորին որդին որ այս միջոցիս երուսաղէմ ուխտի գացած է, մեր Ս. Յակովբեանց վանքը այցելելէ յետոյ Տ. Յարութիւն Պատրիարքին ներկայացեր է:

— Սիւրբիաս Արք. Պարզեանց, որու համար ասկէ առաջ գրած էինք թէ Փեթրոսպոլսի կանչուած էր, բարձրագոյն հրամանաւ Օրէնպոլսի ղրկուած է: Արդեօք աքսոր:

— Ռուս կառավարութիւնը սեպտ. 22ին գրաւած է Կարսի յ. Նշան և Ասաուածածնայ և կեղեցիներու ստացուածքները: Այս պատճառով մեծ կռիւ ծագած է Հայ ժողովուրդին, ռուս տիրանութեան և զօրքերուն միջև: Ժողովուրդը որ լցուած է եղերայդ եկեղեցիներու շուրջը զոռնուած տուններն ու անոնց տանիքներուն վրայ քարեր նետեր և բէվոլվէր արձակեր են ոստիկաններուն ու զօրքերուն վրայ որոնցմէ շատ վիրաւորուել են: Հայերէն մէկ մարդ սպանուել է: Երեւելուք ալ վիրաւորուած են: Չերքակալու են 77 հոգի որոնց մէջ կան երկու քահանայք:

— Սելանիկի մէջ Հայ եկեղեցի մը ու դպրոց մը շինելու համար կայսերական արտօնութիւն տրուած ըլլալով, Տիար Գրիգոր Բաշալեանի նախաձեռնութեամբ հանգանակութեան ձեռնադրութիւն և ցարդ 500 ոսկի գոյացեր է:

— Գալֆանի Որբանոցի վերաշինութեան համար Տիկին Աննա Եսայեան 200 ոսկի, Գրիգոր Էֆ. Գարակէօզեան 50, Յովհաննէս Էֆ. Յակոբեան 30, և Միքայէլ Էֆ. Յակոբեան 30 ոսկի նուիրաւ են, առանց սակայն 10 ոսկի նուիրողին պէ՛տք «անհաւասարելի բարեբար» (?) տիտղոսին արժանանալու:

— Պոլսական թերթերէ կը տեղեկանանք թէ Եփրատուէ 30 ոսկի ղրկուած է նպաստից անտուկին, անոք տղայոց պէտքերը հոգացուելու համար:

(Մենք հոս ասանկ բան մը չիմացանք. արդեօք Ձէյթունի Բարեսիրացին կողմէ ղրկուած է ու եթէ այդպէս է, ինչու ցարդ ժողովրդին չ'մացնել:)

— Բարիզէն Հոկտ. 29 թուականաւ մեզ կը գրեն. «Աւետիս Նազարեկեանը Զուիցերիաի մէջ կարկին. վէրքը ծանր է բայց ոչ վտանգաւոր զինքը տեսնելու համար հոն գացող իր բարեկամ մը Պ. Սաղօեանն ալ Լոնտոն վերադարձած օրը սպաննուել է»:

«Ձէյթունի Բարեսիրաց» ընկերութեան Ընդհ. ժողովը անցեալ կիրակի տեղի ունեցած վարժարանի սրահին մէջ, ընդ նախագահութեամբ Գեր. Բարթողէմիոս Հայրսուրբի, ներկայ էին 41 անդամք: Նախորդ երկու նիստերու արձանագրութիւնները օրինական շիտողութիւններու

որբագրուելէ ու վաւերացուելէ վերջ՝ ժողովը
ըստ օրինի առժամանակ դիւան մը կացմեց՝ Տիարք
Մ. Թէլեանէ և Մ. Նորատուռնիկեանէ բաղկացած :
Յետոյ դադարի քուէարկութեամբ մայր դիւանն
ընտրեց, որոյ անդամք են՝ Տիարք Յ. Շնորհա-
բեան, Մ. Տամատեան, Մ. Թ. Լեւոն և Ա. Պէյլէր-
եան :

Օրը տարածամած ըլլալուն՝ որոշուեցաւ յա-
ջորդ նիստը գումարել յառաջիկայ կիրակի :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսիոյ և Աւստրիոյ կողմէ Մակեդոնիայի
նկատմամբ Բ. դրան տրուած վերջին ծրագիրը
անանկ պայմաններ կը պարունակէ որ կը նկատի
Թուրքիայէն անջատել Մակեդոնիան ու անկախ
վիճակի վերածել . սուլթանը ու իր նախարար-
ները խստիւ կը հակառակին այս ծրագրին , բայց
պարագտները ցոյց կուտան թէ վերջապէս Մա-
կեդոնիա ալ պիտի անցնի առանձնաշնորհեալ եր
կիրներուն կարգը :

Անգլիոյ, Գերմանիոյ, Ֆրանսաի և Իտալիոյ
գետպանները արտօնուած են ուժ տալ այդ ծը-
րագրին :

— Պուլկարիոյ երեսփոխանական ժողովոյ ըն-
տրութիւնը կատարուած են իսպաղութեամբ :
Կառավարականք մեծամասնութիւն կը կազմէ :

— Ամիրալ Ալէքսիէֆ՝ Ռուսիոյ ծայրագոյն
արեւելքի կառավարիչը որ Բօրթ Ներթիւր կը նըս-
տէր , այժմ իր պաշտօնատունը հաստատած է Վը
լատիվօսթինկ :

(Շար. Վերջին երես)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Մինաս Զերազ , գրագէտ-խմբագիր Լ'առմենի
Ֆրանսերէն թերթին , ամենէն աւելի յարաբե-
րութիւն և չփութ ունեցած է Եւրոպացիներու և
գիւղանագէտներու հետ . ոչ ոք իրեն չափ դիմու-
մներ ըրած է և աշխատած է Հայկական դատին
համար . Վհատութիւնը իրեն համար չէ , եթէ
կարելի ըլլայ , օրը հարիւր անգամ այցելել Եւրո-
պայի ժայռաքաղաքները Հայկական խնդրոյն հա-

մար խնդրանքներ մատուցանելու , բնաւ պիտի
չվարաներ . Զերմ կուսակից է Պեռլինի դաշնա-
գրին 61րդ յօդուածին գործադրութեան (ինչ-
պէս Զօպանեան Սան-Սթէֆանօյի 16րդին) և կ'ա-
պացուցանէ անոր դերազանցութիւնը Սան-Սթէ-
ֆանօյի 16րդ յօդուածէն այնքան վստահու-
թեամբ որքան պիտի ընէր մէկը Սան-Սթէֆանօ
գիւղին քով Պեռլին քաղաքին դերազանցութիւ-
նը ցոյց տուած ատեն : Իր դիմումներով և գրու-
թիւններով ուրիշ բան չէ պահանջած բայց եթէ
61րդ յօդուածին գործադրութիւնը , և կրնանք
ապահով ըլլալ որ պիտի շարունակէ տղ նպա-
տակաւ դիմումներ ընել մինչև վերջը նոյն իսկ
Հայաստանի մէջ Հայ չը ֆնալէ յետոյ :

Այնքան յափշտակուած է 61րդ յօդուածով
որ եթէ Տէրութիւնները հարցունեն իրեն , «ինչ
կ'ուզէք , Հայաստանի անկախութիւնը թէ 61րդ
յօդուածին գործադրութիւնը , ապահովապէս
պիտի պատասխանէ , «Պեռլինի դաշնագրին գոր-
ծադրութիւնը կուզենք» :

Ոչ ծխելը և ոչ խմելը տեսնուած է , բայց
միշտ ձեռքը կամ գրպանը լրագիրներու և հան-
դէսներու տրձակ մը անպակաս է , ու կը կարգայ
Գում-Գարուի ընթերցամուր Գէորգ աղային պէս ,
մէկ ծայրէն մինչև միւսը , թերթին անունէն
մինչև տպարանին ստորագրութիւնը :

Բարձրահասակ , ճերմակախառն մազերով ու
այտերուն վրայ անհետացող կարմիրով անձ մըն
է Պ. Զերազ , իր խօսուածքին մէջ երբեմն բա-
ռախաղութիւններ կ'ընէ . Կ'ըսուի թէ Լահէյի
վեհաժողովին փակ դռնէն ներս սպրդած է այն-
պիսի վարպետութեամբ որ դռնապանը պոռացել
է երեսն ի վեր :

— Ո՛վ Պ. Զերազ , անվայել չե՞ր աս :

Քալած ատենը այնպիսի երևոյթ մը ունի ,
իբր թէ իր ճամբուն վրայ Հայեր շարուած կը
պատրաստուին հարցունելու իրեն ,

— Ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը , Պ. Զերազ ,
ե՞րբ պիտի ազատինք :

Եւ ինքն ալ իբր թէ կը պատրաստուի պա-
տասխանելու ,

— Ի՞նչ ընեմ , աղբար , իշթէ ամեն տեղ դի-
մում ըրի , չըլլայ նէ մէյ մըն ալ ձափոնին գը-
լուի կը զարնենք :

Ս. ՄԱՌՐԱՏԵԱՆ

Ծ Է Ծ Ա Ղ

ԿԻՍԿԱՏԱՐ ՊՏՈՅՏ ՄԸ

Տէր և տիկին Մովկիմ և իր քոյրը Օր. Սան-դիկ կիրակի օրը կ'որոշեն մինչև Սան-Սթեֆանո պողոտա մը ընել, ուստի ըստ սովորութեան արդուզարդին կուտան:

Մովկիմ աղան 50 տարեկան է, ներկուած մաղերով ու պեխերով, կաս կարմիր այտեր, աղէկ մը ածիլուած, երիտասարդի շարժումներ ունի դեռ: Տիկինը 40ի մօտ, կլոր ու փայլուն դէմք մը ունի բայց չափազանց գէո է ու տձև. իսկ քոյրը՝ 20էն 25 տարեկան, նիհար և փափուկ:

Տիկինը ձեռնոցը կոճկելով. — Պօհապը զըրկենք թող կառք մը բերէ մեզի:

Մով. — Ի՞նչ պէտք է մարդ զրկել, շիտակ ճամբէն հատ մը կը վարձենք. ուղած կառքդ հոն կայ:

Օր. — Ժամանակն ալ ոչ է արդէն, մինչև որ կառքը բերել տանք, երկար պիտի աւել:

— Ուրեմն աճապարենք:

Եւ տունէն մեկնելով մէկ երկու փողոց անց-նելէ վերջ տիկինը կըսէ ամուսնոյն.

— Հայտէ, ա՛լ տեղէս չեմ երեւար, կառքը բռնէ տեսնեմ. նայէ որ աղւոր ըլլայ, խենդ ու խելառ բաներու մէջ չեմ կրնար նստիլ:

— Սա եկողը գէշ չէ:

— Ամա՛ն. ձիերը տես ի՞նչ տգեղ բաներ են . . . չուզեր, չուզեր:

— Ճանճմ, ձիերուն աղւորութիւնը ի՞նչ պիտի ընես:

— Չըլլար կըսեմ քեզի:

Օր. — Կիրակի ըլլալուն, աղէկ կառք չի գըտնուիր դիւրաւ:

— Սա վերէն եկողը կանչենք, գէշ չերևար կոր:

— Ի՞նչ կըսես, չե՞ս տեսնար կոր, անիւին մէկը տեղէն պիտի ելլայ:

— Ասանկ պատճառներ գտնանք նէ՛ ոտքով երթալը աղէկ պիտի ըլլայ:

— Խելքիդ եկաւ մարդ, ասկէ մինչև Սան-

Սթեֆանո քալել կըլլայ. նորէն բան մի՛ պըճութկեր:

Օր. — Լսեցէ՛ք, նորէն մի՛ սկսիք, սա եկող կառքը աղէկ է. հէ՛. ինչ կըսես:

Տիկ. — Խե՞նդ ես քա՛. . . չե՞ս տեսնար կոր. կառապանի ձեւը նայէ անդամ մը, ենթադրիչ է. մարդ կը խպնի ասանկ կառք նստելու:

Մովկիմ. — Կուգէք նէ քիչ մը երկնանք. անդիններն աւելի աղէկը կը գտնանք հարկաւ:

— Չըլլար. ես գիտեմ քեզի, կամաց կամաց մինչև Մէնչիէ պիտի գտնանք ինքզինքնիս:

(Ուրիշ կառք մը կանցնի)

Օր. — Այ ասոր ըսելիք չի կայ կարծեմ:

Տիկ. — Իրաւ աղւոր է . . . հայտէ կանչէ, — Ի՞նչ կըսես կնիկ, աս ինչ պզտիկ ու նեղ բան է, չօճուխի կառք կը նմանի:

— Մեղայ, մի՛ խենթեցներ մարդը, աս կառքը խօսք չուզեր, տունի կառք կը նմանի:

— Չենք սղմիր կնիկ, ինչո՞ւ կը բարկանաս:

— Ի՞նչպէս չի բարկանամ, չի սղմելի՞ք բան է ասիկայ. (Ու բարկութեամբ կը մօտենայ կառքին.) հայտեցէք:

— Ինծի նայէ, ես դիմացնիդ չեմ նստիր:

— Ո՛ւր պիտի նստիս հապա:

Օր. — Ես կը նստիմ դիմացի կողմը:

Տիկ. — Սախընա, ի՞նչ ամօթ բան է, քա՛, քովս պիտի նստիս դուն. (Ու կը մտնէ կառքը կը նստի, մէկ կողմը գրաւելով իր դմբեթաւոր մարմինին ամբողջ լայնութեամբը, յետոյ օրիորդը կանցնի և շատ դժուարաւ կը տեղադրուի քովը քով.) Հայտէ, դուն ալ դէմքերնիս նստէ լըմնայ:

Մով. — Պապի՛՞քա, աս տարիքովս դիմացդ առնէիր պիտի զիս:

— Էյ ի՞նչպէս ընենք հապա:

Օր. — Կեցիր ես անցնիմ դիմաց լմնայ:

Մով. — Չէ՛, չէ՛, դուն վար իջի՛ր մէյ մը, առաջ ես անցնիմ նստիմ, վերջը դուն:

Տիկ. — Ան ալ կըլլայ, մէջտեղնիս կառնենք:

(Օրիորդը վար կ'իջնէ և Մովկիմ անոր տեղը կանցնի):

Մով. (կինը հրելով) — Ի՛նչ մը անդին գը՛նա . . . հա՛, սանկ. (Կը նստի)

— Է՛, քոյրս ո՛ւր պիտի նստի:

— Կեցիր, կնիկ, դուն քիչ մըն ալ ներս
քաշուէ . . . հա, սանկ, հիմա ան թող դայ.

Օրիորդը կը նստի երկուքին մէջտեղը.

Տիկ. — Կամաց քա՛, ծունգերուս վրայ նըս-
տար. փորս կը ցաւցնես կոր.

Մով. — Հոգ չէ, քիչ մը պիտի նէղուինք
հարկաւ.

Օրի. — (Շիկնելով) Աս ի՞նչ ամօթ, կառա-
պանը անգամ կը խնդայ կոր. Կեցէք գէմերնիդ
անցնիմ.

Տիկ. — Չըլլար ըրի, թող չեմ տար. (էրկա-
նը) դուն նստէ գէմերնիս, եղաւ ըլլալիքը.

— Տեղէս չեմ երեւար.

— Ուրեմն թողէք ես վար իջնեմ.

— Իրաւունք ունի աղջիկը, կը վայլէ որ դուն
նստիս դիմացը.

— Չեմ կրնար կնիկ.

— Չարբընթըս կը բռնէ կոր.

— Իմին ալ ըրօմաթիղմս ոտք կելլայ կոր.

— Ինչ ըսեմ, վերջին անգամ դուրս ելլա-
լըս ըլլայ.

— Ամէն. Կառքին մէջ մէկ կարգի վրայ ե-
րեք հոգի նստիլը ինչա՞ս ընողին ալ ճիտը տակը
մնայ.

— Անանկ է նէ ամեհքս ալ իջնանանք.

— Դուք գիտէք. իջնանք.

Օր. — Աստուած իմ, ի՞նչ ամօթ.

Մով. — Հիշ ալ ամօթ չէ, տեսնապէսը պի-
տի կարծեն որ կառքով եկեր վար կ'իջնանք կոր.

— Չըլլար.

— Կըլլայ.

— Իրաւ չըլլար.

— Բէք ալուր կըլլալ, ահա ես ալ իջայ.


Այս կըլլայ չըլլարի կռիւը քանի մը վայր-
կեան կը տեւէ մինչև որ վար կ'իջնեն կառքէն ու
եկածնուն պէս տուն կը վերադառնան, չի լսե-
լու դարնելով կառապանին օրհնութիւնները զորս
կ'արձակէ իրենց հտեէն.



Հետաքրքիր փոքրիկ մը հարցուց իր մօրը.

— Մայրիկ, ինչու համար միշտ դուրս ելած
ատենդ երեսդ ճերմակ կը քսես.

— Տղաս, արեւը չի պարնէ Տեյի.



Պիր գէնիկինին օղու ափօղաթլըզ էօյրէնմէք
իշիւն Բարիզէ կ'իթմիշ իտի. օրատա պիր ագ-
թրիսթէ աշըզ օլուպ՝ մէրգուլմէ իլէ վազըթ կէ-
չիրմէյէ պաշլար. Բէտէրի՝ էվլատըն պու հալի-
նէ խապէրտար օլտուգտա՝ օղունա շէօյլէ եազար
«Էկէր օ գարըյը թէրք իթմէզսէն՝ սանա
կէօնտէրմէքտէ օլտուղսւմ՝ ալըլընը հէման քէ-
սէճէիմ».

Օղու տա շու ճէվապը վէրիր.

«Էկէր ալըլըմա դամմ իթմէզսէն՝ մէրգու-
մէ իլէ էվլէնէճէիմ».

Հօճանըն պիրի՝ թէնպէլ պիր շակիրտէ խի-
թապէն.

— Միհրան, մատէմ քի օղումաղա հափաւըն
եօզ, եարըն պէօյիւրսէն նէ՝ օլաճագ սըն.

— Հօճա օլուրում, միւսիւ, օ վազըթ չօ-
ճուղլար օղււր՝ պէն տէ տինլէր էօյրէնիւրիմ.

Իքի մատամլար.

— Կէչէնտէ հէմչիրէնիզին գըզընը էվլէն-
տիրմիշսինիզ, էօյլէ՞ մի.

— Էվլէթ մատամ. կիւվէյիմիզ պիր ազ եաշ-
լըճա իտի իսէ տէ, կէօզիւմիւզիւ գաբատըզ վէր-
տիք.

— Չօզ էյի եարմըշսընըզ. պազը պազը էօյ-
լէ պիշիմսիզ շէյլէրէ կէօզ գաբամալը տըր.

Իլմի հիսապ տէրսինտէ.

Հօճա — Փարզ իտէլիմ քի վալիտէն պիր օզ-
կա գօյուն էթիւնի սէքիզէ թագսիմ իթտի, պէ-
հէր բարչասը գա՞շ տիրէմ կէլ ճէք.

Շակիրտ — 50շէր տիրէմ.

— Էկէր 16 բարչա իտէրսէ՝

— 25էր տիրէմ.

— Վէ պու բարչալարը տա ալթըշար տէֆա
քէսէճէք օլուրսա, նէ՝ հաւըլ օլուր.

— Կիւզէլ պիր քաս ֆեսխալիլ հաւըլ օլուր.

(Եւրոմակոսիան քաղաքական յորհրդում)

— Կոմս Լամստորֆ՝ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը որ Բարիկ գացած էր քաղաքական խնդրոց վրայ Պ. Տէլքստէի հետ տեսակցելու, վերադարձեր է Փեդրոպոլի:

— Վատիկանի պալատին թանգարանին մէջ հրդեհ պատահեր էր. Պապը վախնալով որ Վատիկանի հրշէջները անբաւական են կրակը մարելու, քաղաքին հրշէջներն ալ բերել տուեր է. Պապական աշխարհային իշխանութեան բարձունքին ի վեր Ա. անգամն է որ Իտալական կառավարութեան մարդիկ կը մտնեն Վատիկան:

— Լոնտոնէն Նոյ. 4 քուսկանաւ զարնուած հեռագրի մը նայելով, երեք յեղափոխական Հայեր իրենց ժողովաւորին գացած աստիճանին ուրիշ Հայ մը անոնց վրայ կը յարձակի եւ ռեպուբլիկ հարուածներով երկուքը կ'սպաննէ ու երրորդը կը վիրաւորէ. եւ տեսնելով որ անբոխէն պիտի ձերքակարուի, ինկզինքն ալ կ'սպաննէ. յագունի ըսպաննիչին պէս է եղեր զխաւկը:

Մեքենավարին անուշագրութեամբ թերթին անցեալ շաբթուան էջերը սխալ տեղ գրուած ըլլալուն, պարտաւորեցանք ուղղելով՝ այս շաբթու ալ կրննի:

Ա. Զ. Դ.

ՍԱՐԳԻՍ ԹԱՇՃԵԱՆ


Կը ծանուցանէ արգոյ հասարակութեան թէ, երկար ժամանակ յԱթենք Սիւնկերի մեքենայի գործարանին մէջ աշխատած ըլլալով, հիմա եկած ու հաստատած է Եւրա Զապրիեի վրայ Սոփ-էլ-Թապախին, եւ կը նորոգէ կարի ու կօշիկի մեքենաներ եւ ամեն տեսակ գործիքներ, խոստանալով զոհաւորել իրեն դիմողները:

Հրատարակուեցաւ

ԲԱՆԲԵՐ Գրականութեան և Գեղարուեստի, պատկերազարդ վեցա նսեայ հանգէսի Պ. Կիրքը, իր տեսակին մէջ միակը որ կուգայ «Արաքս»-ի տեղը բռնելու Բաժնեգիրն է երկու գիր 12 Ֆր. առաջին գիրքը կարժէ 7 Ֆր. արժէքը չվճարուած յանձնարարութիւնները տնպատասխան կը մնան:

Դիմել Գոնքուստ Էնթոննասիօնայ Ալեքսանտրի Էթիքք հասցէին:

ՏՊԱՐԱՆ



«Հայեղի»-ի սպարանին մէջ դիրամտացւելի գնով կը սպարանին առեւտրական տուներու համար ամեն յեղուէ՝ Բարիկեան վերջին դրամեալք հետաքրքրաւոր, պատկերազարդ եւ գունաւոր փոփոխկազմարարութիւններ. կը սպարանին նաեւ ալ-ցեւոս, հասցէտուն, հարսանեկան հրաշքազիր մահագր, նամակագրութիւն, պահարան, տնտես. եւն, Ուրիշ քաղաքներէ եղած յանձնարարութիւնք ալ փութով կը կատարուին:

ՅԱԿՈԲ ԴԱՐԱՆԿԻՕԶԵՍԻ

Սոգ-էլ-Արքարին

Կը ծանուցանէ իր յարգոյ յաճախորդաց թէ՛ ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի եւս յատկապէս քերել տուած է Զինական, Հնդկական եւ Սէյրանի ընտիր եւ հոտաւէս թէյեր, որոնց գործածութիւնը ներկայ եղանակիս մէջ շատ օգտաւար է:

Կը վաճառէ նաեւ մազի համար ընտիր անեւ գոյնէ, Դիմելը չարաւոր:

Հետեւեալ գիրքերը կը ծախուին Տիար Կարապետ Աստուածատի ֆոյ. Շէրիֆ բաշա.

Փիլիկ Աղբոր Հարսնիք	որշ. ողջ
Այիկէի Լեթայիք, հայաստ. եւ քրիստոնէական գործիքներ	4 " "
Գրական Երազման	50 սնդր.
Գագան Գոճա, գովեսի	20 փրջ
Մանուկայիքի Միլեաւաքը	20 "

ԱՇՈՏ ՓԱԼԱՆԱՆ

Տպագրական ամեն տեսակ գործերու կատարուի, փորագրի, թէ տապալի եւ թէ պղինձի վրայ, կը պատրաստուին նաեւ յաճախականական կնիքներ՝ մեծադէ եւ փոքր:

Աղեքսանդրիա, Ֆրանկ փողոց թիւ 22